

Հարց

Եթե առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված չէ սպառողի կամ մատակարարի գործողություններով, ապա ինչպես է այն իրականացվում:

Պատասխան

Եթե առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված չէ սպառողի կամ մատակարարի գործողություններով, ապա սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքի խախտմանը նախորդող մեկ տարվա տվյալ եռամսյակի ծախս ունեցած ամիսների միջին օրական ծախսի և նույն ժամանակահատվածի համար ձևավորված միջին կշռութային սակագնի արտադրյալով։ Եթե այդ ժամանակահատվածում սպառողը ծախս չի ունեցել, ապա մատակարարը սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը յուրաքանչյուր օրվա համար հաշվարկում է առևտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող առաջին ծախս ունեցած ամսվա միջին օրական ծախսի և նույն ժամանակահատվածի համար ձևավորված միջին կշռութային սակագնի արտադրյալով։ Վերահաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությունը համաձայնեցվում է սպառողի հետ և հաշվի է առնվում առեւտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար տրվելիք էլեկտրաէներգիայի քանակության արժեքի վճարման փաստաթղթում։ Նման դեպքում առևտրային հաշվառքի սարքը վերականգնվում է մատակարարի հաշվին։ Առևտրային հաշվառքի սարքի վերականգնման նպատակով մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը։

ա)բնակչության դեպքում՝ մինչև 1 ժամ։

բ)ամրագրված պայմանագրային վթարային կամ տեխնոլոգիական հզորություն չունեցող այլ սպառողների դեպքում՝ մինչև 3 ժամ։ Եթե սպառողն ունի ամրագրված պայմանագրային վթարային կամ տեխնոլոգիական հզորություն, ապա մատակարարն առևտրային հաշվառքի սարքը վերականգնելու նպատակով պարտավոր է դադարեցնան և վերականգնման ժամկետները համաձայնեցնել սպառողի հետ կամ հաշվառքի սարքը փոխարինել առանց էլեկտրամատակարարման դադարեցման։